

տոս 1667 թուակիր նամակին մէջ, զոր ըստորեւ կը թարգմանենք լատինական բնագրէն :

«Մեծ Հայքի Պատրիարքին

27 Օգոստոս 1667

Միջագետքի Տէր Արքեպիսկոպոսը Տէրութեանդ նամակին հետ Հռոմ ժամանեց այն ժամանակ երբ ամենուն արցունքներուն ու վշտին հետ, հոգին Աստուծոյ ձեռքն աւանդեց սուրբ եւ յարգելի յիշատակաց արժանի Աղեքսանդր է. , եւ երբ կարդինալներու Սրբազան Ժողովը կը խորհէր յաջորդ Քահանայապետին ընտրութեան մասին :

Թէպէտ խիստ ծանր արգելք մ'էր այս՝ սակայն Սրբազան Ժողովին Քարտուղարը հարցուց՝ թէ նոյն Եպիսկոպոսը կ'ուզէ՞ր քու միտքդ եւ նամակդ յայտնել Վսեմաշուք Հայրերուն, որպէսզի երկարատեւ սպասում չունենար անոր անհամբեր հոգին : Բայց որովհետեւ ան պատասխանեց՝ թէ երդումով պարտաւորուած է ոչ մէկուն յայտնել քու յանձնարարութիւնդ եթէ ոչ Գերագոյն Քահանայապետին, հոգ տարուեցաւ որ ընտրութենէն յետոյ, ներկայացուէր մեր Սրբազան Տիրոջ, Կղեմէս Թ.ի, եւ անոր առջեւ պարզէր պատուէրներդ եւ նամակդ :

Անոնցմով Նորին Սրբութիւնը ճանչցաւ Տէրութեանդ դանգատը Լէոպոլտոյ Արքեպիսկոպոսին մասին՝ թէ սա կը դայթակղեցնէ Հայ Ազգը, որ Լեհաստան կը բնակի, մասնաւորապէս այն պատճառաւ՝ թէ Ս. Պատարագի ընթացքին ջրախառն գինի կը սըր-